Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեքի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի <<Ֆիզկուլտուրա>>/19 դասաժամ/առարկայի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :

Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում/Ձև1/,

-մեկ լուսանկար3*4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,/միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ/,

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան ՝աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/և աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից,

-ինքնակենսագրություն /Ձև 5/,

-այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝հավաստող փաստաթուղթ,

-Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու մասին, կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն/մասնակցած լինելու դեպքում/

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի ապրիլի 14-ից մինչև ապրիլի 28-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից մինչև 16:00-ն,բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մայիսի 5-ին՝ ժամը 09:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեքի միջնակարգ դպրոցում:Հասցեն՝ գ.Շատջրեք,փողոց 2 շենք 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝094-87-01-83 հեռախոսահամարով: